ԿՆՈՋ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԷԼՊԻՍ ԿԵՍԱՐԱՑՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՍՍԵՈՒՄ

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրակ. ինստ.
առաջատար գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ
nairahambardzumyan@yahoo.com

DOI: 10.54503/978-9939-481-23-4-297

Համառոտագիր

Ուսումնասիրությունը քննում է 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ առաջին կին խմբագիր և լրագրող Էլպիս Կեսարացյանի «Ընկերութեան օգտակարութիւնը» էսսեն, որը տպագրվել է 1862 թվականին «Կիթառ» հանդեսում:

Նշենք, որ աշխարհում առաջին հայալեզու «Կիթառ» հանդեսը հիմնադրել, խմբագրել և տպագրել է Էլպիս Կեսարացյանը 1861-1863 թվականներին Կ. Պոլսում:

Հանդեսի նշանաբանն էր՝ «կանանց մասին և կանանց համար» («Հրավէր հայկազն օրիորդաց»):

Ուսումնասիրության *նպատակներն* են՝

ա. քննել կնոջ սուբյեկտության պատմական և սոցիալ-մշակութային փոխակերպումները, նրա կրթության, դաստիարակության, հաղորդակցության հիմնահարցերը,

բ. վերլուծել կնոջ դերակատարման կարևորությունը ազգային-բարեգործական ընկերությունների ձևավորման և զարգացման գործնականության տիրույթում,

գ. բացահայտել կնոջ ինքնության որոնումների, ինքնաճանաչման, ինքնորոշման և առաջնորդության հիմնահարցերը Էլպիս Կեսարացյանի «Ընկերութեան օգտակարութիւնը» էսսեում,

դ. արձանագրել դրանց դերը և նշանակությունը ազգային մշակույթի պահպանման գործում:

Ուսումնասիրության *խնդիրներն* են՝

ա. քննել պատմական միջավայրը, որում ստեղծվել է էսսեն,

բ. վերլուծել սոցիալ-մշակութային տիրույթը,

գ. մեկնաբանել դրանց համամարդկային դերն ու նշանակությունը:

Ուսումնասիրության *նորույթն* այն է, որ Էլպիս Կեսարացյանի «Ընկերութեան օգտակարութիւնը» էսսեում ներկայացվող տեսանկյունից քննվում է առաջին անգամ: Ուսումնասիրության *արդիականությունը* պայմանավորված է նյութի միջգիտակարգայնությամբ. այն իրականացվել է պատմական, գրականագիտական և ֆենոմենոլոգիական մեթոդների օգնությամբ՝ մեկ շառավղում քննելով տեքստի գաղափարական բովանդակությունը, գեղագիտական հղումները, պոետիկան, ևն:

Հետազոտության իրականացման հիմքում դրել ենք ինչպես ընդհանուր գիտական (վերլուծություն, համադրում), այնպես էլ գրականագիտական

(մեկնաբանական) մեթոդներ:

Նկատի ունենալով նյութի միջգիտակարգային բնույթը՝ քննության ժամանակ կիրառել ենք նաև պատմական ելակետից բխող մեկնության գիտական մեթոդներ:

Հետազոտությունն իրականացնելիս կատարել ենք նպատակային բաժանումներ՝ հիմքում դնելով դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտելու խնդիրը՝ հասնելով գաղափարական ընդհանրացման:

Կեսարացյանի էսսեների համակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորվում է գաղափարը, թե նրա գերնպատակը, ընդհանրապես, սոցիումի կատարելագործումն է, դրա զարգացման պատմական և տեսական հիմնահարցերը, ինչպես նաև՝ կանանց դերակատարությունը այդ բևեռներում, որոնք, սակայն, դեռևս հանգամանալից քննության չեն ենթարկվել:

Կեսարացյանի էսսեներում արտացոլված կին–տղամարդ սոցիալական հարաբերությունները ոչ թե պարզունակ նկարագրություններ կամ հարցադրումներ են նրանց դերի և տարբերակման վերաբերյալ, այլ առավելապես հասարակության, կրթության, դաստիարակության մեջ կնոջ դերի, իրավունքների, տղամարդկանց հիերարխիայի իշխանության, կին–տղամարդ փոխհարաբերությունների, նրանց առաջնահերթությունների և այլ խնդիրների քննություն: Ուստի առաջին պլան են մղվում ոչ միայն մեթոդական, այլև գաղափարական դրույթները:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն Էլպիս Կեսարացյանի «Ընկերութեան օգտակարութիւնը» էսսեի վերլուծության, այլև կանանց առաջնորդության հիմնահարցերի քննության տեսանկյունից:

Բանալի բառեր բառակապակցություններ՝ Էլպիս Կեսարացյան, ընկերություն, ազատագրում, իրավահավասարություն Կ. Պոլիս, վարժարան, սոցիում, սահմանադրություն:

THE ISSUE OF WOMEN'S LEADERSHIP AND SOCIAL ROLE IN ELPIS KESARATSIAN'S ESSAY *"THE USEFULNESS OF THE ASSOCIATION"*

NAIRA HAMBARDZUMYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Language Institute named after H. Acharyan
PHD, Associate Professor,
Leading Researcher,
nairahambardzumyan@yahoo.com

Abstract

The study examines the essay *"The Usefulness of the Association"* by Elpis Kesaratsian, the first Western Armenian female editor and journalist of the second half of the nineteenth century.

The essay was published in 1862 in the journal *Kithar*. It should be noted that the first Armenian-language journal in the world, *Kithar*, was founded, edited, and published by Kesaratsian in Constantinople between 1861 and 1863.

The journal's motto was "about women and for women" (*Invitation to Armenian Maidens*).

The *aims* of the study are:

a. to examine the historical and socio-cultural transformations of women's subjectivity, as well as issues related to their education, upbringing, and communication;

b. to analyse the importance of women's participation in the formation and development of national philanthropic associations;

c. to reveal the issues of women's search for identity, self-knowledge, self-determination, and leadership in Kesaratsian's essay *"The Usefulness of the Association"*;

d. to record their role and significance in the preservation of national culture.

The *objectives* of the study are:

a. to examine the historical environment in which the essay was written;

b. to analyse its socio-cultural context;

c. to interpret their universal human significance and relevance.

The *novelty* of the study lies in the fact that Elpis Kesaratsian's essay *"The Usefulness of the Association"* is examined from this particular perspective for the first time.

The *relevance* of the study is determined by the *interdisciplinary* nature of the material: it has been carried out through the use of historical, literary-critical, and phenomenological methods, examining within a single analytical framework the ideological content of the text, its aesthetic references, poetics, and related aspects.

The research is based on both general scientific methods (analysis and comparison) and literary-critical interpretative methods.

Considering the interdisciplinary nature of the material, scientific methods of interpretation grounded in a historical perspective were also applied during the analysis. In the course of the research, purposeful structural divisions were made

based on conceptual propositions, enabling the identification of the problem and the formulation of broader ideological generalisations.

A comprehensive study of Kesaratsian's essays supports the idea that her overarching aim was, in general, the improvement of society, addressing its historical and theoretical developmental issues, as well as the role of women within these spheres, which, however, have not yet been thoroughly examined.

The social relationships between women and men reflected in Kesaratsian's essays are not merely simplistic descriptions or questions regarding their roles and distinctions; rather, they constitute an examination of the woman's role and rights in society, education, and upbringing, the authority of male hierarchies, gender relations, their priorities, and other related issues. Consequently, both methodological and ideological aspects come to the forefront.

In conclusion, the study is important not only for the analysis of Kesaratsian's essay *"The Usefulness of the Association,"* but also for examining the broader issues of women's leadership.

Keywords and phrases: Elpis Kesaratsian, association, Emancipation, Equality, Constantinople, school, society, Constitution.

ПРОБЛЕМА ЖЕНСКОГО ЛИДЕРСТВА И СОЦИАЛЬНОЙ РОЛИ В ЭССЕ ЭЛЬПИС КЕСАРАЦЯН *«ПОЛЬЗА ОБЩЕСТВА»*

НАИРА АМБАРЦУМЯН

Старший научный сотрудник
Института литературы имени Манука Абегяна, НАН РА,
кандидат филологических наук, доцент
nairahambardzumyan@yahoo.com

Аннотация

Исследование посвящено эссе *«Польза общества»* западноармянской писательницы, первой женщины–редактора и журналистки второй половины XIX века Эльпис Кесарацян, опубликованному в 1862 году в журнале *«Китар»*. Отметим, что первый в мире армяноязычный журнал *«Китар»* был основан, отредактирован и издан Э. Кесарацян в Константинополе в 1861–1863 годах. Девизом журнала было: «о женщинах и для женщин» (*«Приглашение армянским девицам»*).

Цели исследования:

а. рассмотреть исторические и социокультурные трансформации женской субъектности, а также проблемы образования, воспитания и коммуникации женщин;

б. проанализировать значимость участия женщин в формировании и развитии национально–благотворительных обществ;

в. выявить проблемы поиска женской идентичности, самопознания, самоопределения и лидерства в эссе Кесарацян *«Польза общества»;*

г. зафиксировать их роль и значение в сохранении национальной культуры.

Задачи исследования:

а. рассмотреть историческую среду, в которой было создано эссе;

б. проанализировать его социокультурный контекст;

в. интерпретировать их общечеловеческое значение и роль.

Научная *новизна* исследования заключается в том, что эссе Эльпис Кесарацян *«Польза общества»* рассматривается с данной точки зрения впервые.

Актуальность исследования обусловлена междисциплинарным характером материала: оно выполнено с использованием исторического, литературоведческого и феноменологического методов, что позволило в едином аналитическом поле рассмотреть идейное содержание текста, его эстетические отсылки, поэтику и другие аспекты.

В основу исследования положены как общенаучные методы (анализ, сопоставление), так и литературоведческие (интерпретационные) методы.

Учитывая *междисциплинарный* характер материала, в ходе анализа были также применены научные методы интерпретации, исходящие из исторического подхода. В процессе исследования были осуществлены целенаправленные структурные разделения, основанные на положениях, позволяющих раскрыть проблему и прийти к идейным обобщениям.

В целом следует отметить, что данное исследование важно не только с точки зрения анализа эссе Кесарацян *«Польза общества»*, но и с точки зрения рассмотрения более широких проблем женского лидерства.

Комплексное изучение эссе Кесарацян подтверждает идею о том, что её главная цель в целом заключалась в совершенствовании общества, рассмотрении его исторических и теоретических проблем развития, а также роли женщин в этих сферах, которые, однако, до сих пор не подвергались тщательному исследованию.

Социальные отношения между женщинами и мужчинами, отражённые в эссе Кесарацян, не являются простыми описаниями или постановкой вопросов о их ролях и различиях; скорее, они представляют собой исследование роли и прав женщины в обществе, образовании и воспитании, власти мужской иерархии, гендерных отношений, их приоритетов и других сопутствующих проблем.

В результате на первый план выходят как методологические, так и идеологические положения.

Ключевые слова и фразы: Эльпис Кесарацян, общество, освобождение, равноправие, Константинополь, школа, социум, конституция.

Ներածություն

1861 թվականին գրող, հրապարակախոս, առաջին հայ կին լրագրող և խմբագիր Էլպիս Կեսարացյանը[1] հիմնադրում և խմբագրում է «Կիթառ»[2]

1 Կեսարացյան (Տողրամաճյան) Էլպիս – ծնվել է 1830 թվականին Կ. Պոլսում: Նա առաջին կի զն լրագրողն էր և առաջին խմբագիրը, իսկ «Կիթառը»՝ կանանց առաջին հանդեսը Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է Օրթագյուղի և Պեշիկթաշի հայկական դպրոցներում: 1879թ. հրատարակել է «Նամականի առ ընթերցասէր հայուհիս» ժողովածուն: 1872 թվականին որպես ուսուցչուհի աշխատել է Մաքրուհյաց վարժարանում: Աշխատակցել է պոլսահայ մամուլին: Մահացել է 1913 թվականին:

2 Պոլսահայ իրականության մեջ և ընդհանրապես աշխարհում «Կիթառը» առաջին

ամսօրյա հանդեսը, որի անդրանիկ համարը տպագրվում է 1862 թվականի օգոստոսի մեկին, Կ. Պոլսում: Երևույթը մեծ և լուրջ հեղափոխություն էր ոչ միայն օսմանյան բռնապետության մեջ ապրող մտավորական հայ տղամարդկանց և կանանց, այլև՝ սուլթանական գրաքննության համար:

«Կիթառ» հանդեսում տպագրած «Ընկերութեան օգտակարութիւնը» **[2, էջ 4–7, 3, էջ 14–16]** էսսեում Էլպիս Կեսարացյանը հստակեցնում է իր՝ որպես խմբագրի, լրագրողի և էսսեիստի սոցիալ-հասարակական, ազգային-քաղաքական հայացքներն ու գաղափարները, ինչպես նաև՝ ազգային, կրթական, բարեգործական և աղքատախնամ ընկերությունների[1] դերակատարությունը կանանց ազատագրության և իրավունքի հիմնահարցերում:

Սոցիալական միջավայրը և աշխարհաքաղաքական գործոնը

Էլպիս Կեսարացյանի «Ընկերութեան օգտակարութիւնը» էսսեն արմատապես արտացոլում է 19-րդ դարի երկրորդ կեսին ապրող և գործող կին հեղինակի սոցիալ-հասարակական գիտակցությունը, հայացքները, ազգային-քաղաքական մտքի տեղաշարժերը, որոնք առնչվում են իրականության հետևյալ սահմանին՝ «Ընկերութիւնները բազում տեսակ են, որոց գլխաւորները միայն կը հիշեմք այն է, Քաղաքական, Ազգային և Մասնաւոր որք մէկ մէկ գլխաւոր ջահեր են ընդհանրութեան լուսավորութիւնը կազմող» **[2, էջ 4–7]; [4]:**

Միևնույն տիրույթում միավորելով ազգային ոգին և կնոջ՝ որպես սուբյեկտի ճակատագիրը՝ Կեսարացյանը կնոջը ուղղորդում է գրականություն ընթերցելու և ինքնակրթվելու՝ համարելով դրանք տգիտությունից փրկվելու ամենաուղիղ ճանապարհը:

Խոսելով սոցիումի, բարոյականության և ընկերավարության մասին՝ նա առանձնացնում է Տիգրան Մեծի ժամանակները և ոսկեդարյան

հայալեզու հանդեսն էր՝ «կանանց մասին և կանանց համար», «Հրավէր հայկազն օրիորդաց» նշանաբանով: Հանդեսի խմբագրուհին իր հոդվածները ստորագրել է «Էլպիս Կեսարացեան Ե. Կ. Տ. Հայկուհի» և «Կիթառ» հանդեսի յոթ համարներում տպագրել է «Ոգին հայրենասիրութեան» (Երեւակայութիւն), «Ընկերութեան օգտակարութիւնը», «Իրաւունքը ի գործ դնելը յանդգնութիւն չէ» և «Դաստիարակութիւն օրիորդաց» էսսեները: «Կիթառ»-ում և ընդհանրապես մամուլում տպագրած էսսեները, առ հայուհիները գրած նամակները, իմաստասիրական մտքերը և հոդվածները հեղինակն ուղղում է ոչ միայն իր, այլև բոլոր ժամանակներում ապրող և ստեղծագործող կանանց:

1 Ուշագրավ է, որ 19-րդ դարի առաջին կեսին Կ. Պոլսում սկսեցին հիմնադրվել հասարակական նշանակության ընկերություններ և միություններ, որոնց հիմնադիրները տղամարդիկ էին: Սույնը պայմանավորված էր օսմանյան հասարակության մեջ կանանց և տղամարդկանց իրավունքների անհավասարությամբ: Այդ ընկերությունների և միությունների կանոնադրությունների միջոցով սահմանվում էին նաև դրանց գործունեության բնույթը և անդամագրության պայմանները, ըստ որոնց՝ ընկերության անդամ կարող էին դառնալ միայն չափահաս տղամարդիկ, որ հնարավորություն ունեին վճարելու սահմանված ամսական անդամավճարը: Կանայք կարող էին անդամագրվել, սակայն առանց ընկերության կամ միության ժողովներին մասնակցելու իրավունքի: Այդօրինակ կարգ էր գործում, մասնավորապես, 1846 թվականի մարտի մեկին Կ. Պոլսի Բերա թաղամասում Ռափայելյան և Մուրադյան վարժարանի «Հայ կաթողիկէ երիտասարդներու» շարժման հիմնադրած «Համազգեաց ընկերությունում» [4, էջ 56–57], որի կանոնադրությունը սահմանում էր՝ «Ընկերութեան անդամ կրնային ըլլալ նաեւ տիկիններ՝ առանց ժողովքներու մասնակից ըլլալու իրավունքի (կանոն 6)» [4, էջ 55] կամ՝ 1846 թվականի մայիսի մեկին հիմնադրված «Նարեկեան Ընկերութիւնում», որի ջանքերով «Բերայի մէջ կը կառուցուի Նարեկեան վարժարանը» [4, էջ 56–57]:

հերոսականության օրինակները, որոնք հուշում են երկրի խաղաղ ընդերքից՝ Պեգասի ոտնատեղից ցայտող բուժիչ ջրի կամ խավարից ծագող աստղի գոյությունը. «Մինչև հիմայ Հայաստանեաց երկրին վիճակը անարև երկրի նման էր... բայց ահա ընկերութե օգուտը կը հասնի նէ անոնց <...> Ազգութիւն Կրօնք և ընթերցմունք չճանչելէ զատ՝ իրենց լեզուն անգամ կորսնցուցած էր, բայց այժմ ընկերութիւնը նոյն խեղճ վիճակաց դարման կը տանի, նոյն անխնամ երկիրներու մէջ կը հաստատեն Վարժարաններ Թանգարան և Տպագրատուններ որով մտաւոր մշակութիւնը կը սկսի ոգի առնել և կենդանութեան յոյս կուտայ Ազգին» **[2, էջ 4–7], [5]:**

19-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայում, օսմանյան և ռուսական կայսրություններում տեղի ունեցած սոցիալական, տնտեսական, հողային, քաղաքական, և այլ բարեփոխությունները և դրանց շուրջ մտավորական շրջանակների աշխուժացումը, ուղղակի ազդեցություն ունեին հայ իրականության և մտավորականության վերազարթնումի գործում:

Դրան նպաստում էին հատկապես Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի հայրենասիրական գաղափարների տարածումը, որոնց միացան և պայքարեցին նաև կանայք՝ ներգրավվելով ազգային-ազատագրական, սոցիալ-հասարակական և քաղաքական գործընթացներում. «<...> վերոհիշեալ ձեռնարկութեան կարեւորութիւնը յայսմ բովանդակելուն ուզեցի այս դիտողութիւնս ազգայնոց ուշադրութեան ներկայացընել, որպէսզի ազգայնոց շարժումը ապահովապէս դէպ ի յառաջադիմութիւն եւ քաղաքակրթութիւն ուղղելու համար, իգական սեռի գործակցութեան օգտակար ըլլալը ճանչելով՝ անոր յարմարութեան եւ հանճարոյն սեփական դերն իրմէ չզլացուի: Այս յեղափոխութիւնը՝ որ ազգային շարժումն աւելի կըզօրացընէ, արդարև բաւական է զմեզ շուտով այնպիսի կացութեան մը հասցընել, որուն շնորհքները քաղաքակրթեալ ազգերը լիովին կը վայելեն» **[8, էջ 2], [2, էջ 4–7]:**

Ոգևորվելով «խոստումնալից» բարեփոխումների հեռանկարով՝ 1839 թվականի նոյեմբերի երեքին՝ սուլթան Աբդուլ Մեջիդի՝ գահին հաստատվելուց անմիջապես հետո, եվրոպական համալսարաններում կրթություն ստացած, լուսավորության և հասարակական առաջընթացի գաղափարներով տարված հայ երիտասարդները Կ. Պոլսում հիմնեցին հասարակական, կրթական, ազգային ընկերություններ: Չնայած այս ամենին՝ հայ մտավորականությունը արագորեն ըմբռնել էր հարցի ձևական բնույթը և գիտակցում էր, որ այն առավելապես միֆ է, քան իրականություն:

Ի տարբերություն մինչև այդ եղած բարեփոխումների՝ թանզիմաթում տեղ էին գտել ոչ միայն ռազմական այլև՝ տնտեսական, քաղաքական, օրենսդրական, սոցիալ-մշակութային, կրթական, կրոնական և ազգային խնդիրներին վերաբերվող հարցեր: Նախաձեռնության գլուխ կանգնած էր թուրք բյուրոկրատիայի կրթված խումբը՝ Մուսթաֆա Ռեշիդ փաշայի գլխավորությամբ, որ հետագայում դարձավ Գյուլհանիի Հաթթը և Շերիֆը (խաչ և սրբազան հրաման):

1853 թվականին Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչներից ընտրված Ազգային, Հոգևոր և Գերագույն ժողովներում կազմվում է Ուսումնական խորհուրդ, որի անդամներ Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը, Նիկողայոս Պալյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Կարապետ Ութուճյանը, Գ. և Մ. Աղաթոն եղբայրները 1857 թվականին մշակում են կրոնական, ազգային,

մշակութային, հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն, որը Նահապետ Ռուսինյանի առաջարկով կոչվում է «Սահմանադրություն»: Այն հիմքում ուներ բելգիական սահմանադրության գլխավոր սկզբունքները, և կրում էր 1848 թվականի ֆրանսիական հեղափոխության գաղափարական ազդեցությունը:

1860 թվականի մայիսի քսանչորսին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ընդունում և վավերացնում է Սահմանադրության սկզբնական տարբերակը (հարյուր հիսուն հոդված):

Ազգային Սահմանադրության վերջնական և վերաքննված տարբերակը, երկարատև պայքարից հետո, վերջապես ընդունվում և վավերացվում է օսմանյան կառավարության կողմից և ի գործածություն պատրիարքարանին է հանձնվում 1863 թվականի մարտի 17-ին (իննսունինը հոդված):

Վերաքննված սահմանադրությունը Ազգային ընդհանուր ժողովն ընդունում է 1863 թվականի մարտի 20-ին: Այն կազմված էր «Ներածությունից» («Հիմնական սկզբունք»), հինգ գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում էին առանձին ենթագլուխների, և իննսունինը հոդվածներից (նախնական տարբերակում հարյուր հիսուն ենթագլուխ էր) **[1]:**

Շարժման ընթացքում մշակված այս փաստաթուղթը՝ Սահմանադրությունը **[1],** կանոնակարգում էր արևմտահայության ներքին կյանքը և հասարակական, քաղաքական, իրավական, կրոնական և մի շարք այլ խնդիրներից բացի, սահմանում էր նաև կանանց (աղջիկների) իրավունքները՝ տղամարդկանց հավասար կրթություն ստանալու, մշակութային կյանքում ակտիվ դերակատարում և սոցիալական ապահովություն ունենալու, ինչպես նաև՝ բարեգործական, կրթական, դաստիարակչական, խնամակալական, հովանավորչական և այլ գործունեություններ ծավալելու ուղղությամբ. «Ուսումնական խորհրդոյն պաշտոնն է՝ Հայոց Ազգին դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւնը: Իր պարտաւորութիւքն են Ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց դաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաստատուած Ընկերութիւններուն խրախոյս տալ և ձեռընտու ըլլալ, դպրատանց դաստիարակներուն կացութիւնը լաւցունելու և ապագայն անդորրելու խնամ տանել. Ազգին մէջ յաջողակ և քաջահմուտ դասատուներ հասցունելու, և դպրոցական դասագիրքեր պատրաստելու ջանք և փոյթ ունենալ» **[1]:**

Սահմանադրության գոյությունը մեծ հնարավորություն էր հատկապես կանանց համար, ուստի՝կայսրության հայաշատ քաղաքներում սկսեցին բացվել աղքատ կամ ոչ պատշաճ հնարավորություններ ունեցող ընտանիքների աղջիկների համար օրիորդաց կամ սանուհյաց վարժարաններ և դպրոցներ: Այդ ընտանիքները սեփական միջոցներով չէին կարող ապահովել իրենց զավակների կրթական ծախսերը:

Արդեն գործող կամ նորաստեղծ այդ վարժարաններին ու դպրոցներին կից արագորեն ստեղծվեցին հասարակական ընկերություններ և միություններ[1], որոնց հիմնական նպատակը հայ կանանց և աղջիկների կրթության և

1 Ի սկզբանե կանանց կրթական, դաստիարակչական, բարեխնամական գործունեություններին նպաստող ընկերությունները և դրանց բարերարները տղամարդիկ էին: Ընկերությունների և միությունների ստեղծման և գործունեության համառոտ պատմությանն անդրադարձել է Վիեննայի Մխիթարյան միաբանության Հ. Եփրեմ վարդապետ Պողոսյանը: Տե՛ս [4] [5] [6]:

դաստիարակության գործն էր, հագուստի, գրենական պիտույքների հոգածության հարցերը, ֆինանսական ապահովությունը, աղքատներին բժշկական և հումանիտար օգնություններ ցուցաբերելը. «Օրթագիւղ, 5 ապրիլ, 1864, <...> կը փութամ հաղորդել «Աղքատախնամ Ընկերութիւն Տիկնանց» անուամբ ընկերության կազմուիլը, որ գիւղիս ազգասէր Տիկնայք այս օրերս հաստատեցին՝ իրենց դիտաւորութեան նպատակ ունենալով աղքատը իւր թշուառ վիճակէն ազատել: <...> Դեռ երկու տարի չըներ երբ անիշխանութիւնը ազգային կառաւարութիւնն երեսի վրայ ձգած ըլլալով ազգային հիւանդանոցն ողբալի վիճակի մէջ կը գտնուէր, ...ազնիւ տիկնայք կարեկցաբար փութացին իրենց մէջ խնամակալութիւն մը հաստատել Հիւանդանոցի թշուառ անկելոց նպաստամատոյց ըլլալու համար» **[8, էջ 2]**:

Սոցիումի կատարելագործման հիմնագաղափարը որպես «Ընկերութեան օգտակարութիւնը» էսսեի հիմք

Էլպիս Կեսարացյանի էսսեներում կանացի կոկետություն չկա. հեղինակի գեղագիտական հղումները քննելով պարզում ենք նրա՝ որպես կնոջ, մտավոր և ինտելեկտուալ կարողությունների բացառիկությունը նախանշող և գրապատմական տվյալ ժամակաշրջանի համար չափազանց խորաթափանց ու առաջադեմ գաղափարները, աշխարհընկալումը, երբ գիրը, գրականությունը և խմբագրական աշխատանքները տղամարդկանց մենաշնորհն էր, և օսմանյան կայսերապաշտական իրականության մեջ դրանք ենթարկվում էին խիստ գրաքննության **[7, էջ 26–28]**:

Կեսարացյանի սոցիալ-հասարակական, տնտեսական և քաղաքական մտածողությունը ձևավորվել է՝ ներառելով ազգային ինքնության և գիտակցության տիրույթը: Այն ընդգրկում է նաև կին հեղինակի քաղա-քացիական գիտակցությունը և գաղափարաբանական հայեցակարգի ինքնուրույնությունը. «Քաղաքականն է ազգաց մերձաւորութիւններ որ ընկերութեան գլխաւոր և առաջին սքանչելի լոյսը կը կազմէ, Եւրոպիոյ գաւառը իւր ընտիր լուսաւորութեան տիտղոսով չէր պարծեր, երբ ուրիշ Ազգաց յարաբերութիւններ նուազ էին իւր մէջ <...>: Մայրաքաղաքիս մէջ բացայայտ կերպով կերեւնայ յորմէ հետէ Եւրոպացւոց յարաբերութիւնները յաճախեցան Պօլսոյ հետ <...>: Չենք կարեր ժխտել որ մեր այժմեան ազատուն երջանկութիւնը կը վայելեմք, քանզի քաղաքականութիւնը հալածեց բարբարոսութիւնը քաղաքականը զօրացոյց ազատ կրօնասիրութիւնը նա ճանաչել տուաւ ազատութիւնը գերութիւնը ծառայութիւնը և հպատակութիւնը» **[2, էջ 4–7], [5]**:

Չնայած Թանզիմաթի[1] տարիներին հռչակվել էին Օսմանյան կայսրության հպատակների անձի և գույքի ապահովության, կրոնի ազատության մասին օրենքներ, այնուամենայնիվ, օսմանյան բռնապետության մեջ շարունակվում էին ոչ թուրք ժողովուրդների (այստեղ՝ հայերի) հալածանքները, որոնք

1 Թանզիմաթը օսմաներեն բարեփոխումների (ռեֆորմների) օրենսգիրք է, որի հիմնական սկզբունքները շարադրվել և հրապարակվել են 1839 թվականին Գյուլհանյան Հաթթը Շերիֆ և 1856 թվականի Հաթթը Հումայուն հրովարտակներում, որոնք նախատեսում էին բարեփոխումներ, սակայն հիմնականում չեն իրագործվել: Թանզիմաթը ընդունվել է Օսմանյան կայսրությունում 1839–1876 թվականներին, որին զուգահեռ ընդունվել է նաև կայսրության առաջին սահմանադրությունը: Օսմանյան կայսրությունում Թանզիմաթի տարիներին (1839–1876) տեղի ունեցան հասարակական, կրթական, մշակութային էական տեղաշարժեր:

պարբերաբար ուղեկցվում էին ապստամբություններով (տե՛ս 1862, 1878, 1895 Զեյթունի դեպքերը):

1840–1850-ական թվականներին (և մինչ այդ) Օսմանյան կայսրությունում հայ կանայք ակտիվ մասնակցություն չունեին գրական-մշակութային կյանքին, կրթական, հումանիտար և հասարակական կազմակերպությունների գործունեությանը, ինչն ի սկզբանե պայմանավորված էր ազգությամբ, դավանանքով, հայրիշխանական սոցիումով, կնոջ և տղամարդու իրավահավասարության բացակայությամբ:

Ժամանակի մամուլը, մասնավորապես՝ «Մասիս» պարբերականը, նույնպես անդրադառնում էր սույն երևույթին՝ որպես խորքային և արմատական հիմնախնդրի. «Ազգի ընկերական զարգացման եւ յառաջադիմութեան սկզբնապատճառ եղող սկզբանց մէկն ալ երկու սեռի դաստիարակութիւնն ըլլալը, <...>. երբ երկու սեռը հաւասարապէս ունենան մի եւ նոյն բարոյական եւ մտաւորական կարողութիւնները, յայնժամ երկու կողմի լուսաւոր գաղափարները մէկտեղ աջակցելով՝ կրնան յաղթող հանդիսանալ այն ամեն դժուարութեանց՝ զոր տգիտութիւնը կը յարուցանէ յառաջադիմութիւնը խափանելու համար» **[8, էջ 2], [2, էջ 4–7]**:

Կեսարացյանի երկերի ուսումնասիրությամբ հիմնավորվում է գաղափարը, թե հեղինակի գերնպատակը *սոցիումի կատարելագործումն է*:

Բարոյականության հիմնահարցերը Էլպիս Կեսարացյանը դիտարկում է ավանդույթից դուրս և կանանց պաշտպանում է ավանդական-փակ տեսաբանությունից. «Գանք այժմ իգական սեռին ընկերութեան օգտակարութեան, որ մեր նպատակն է: Նոյն սեռը մինչեւ հիմայ օրինաւոր ազատութենէ զուրկ ըլլալով վանդակի մէջ արգիլուած թռչնոց նման էր, որ անձուկ սահմանին մէջ փակուած իւր զօրութենէն նուաղած է, ...այժմ դարոյս ազատութեան լոյսը նոր կը տեսնէ <...>» **[3, էջ 14–15]**:

Կնոջ սոցիալական դերակատարության շուրջ հեղինակի դատողությունները ըմբռնելի են հատկապես կանանց կողմից հիմնադրվող ազգային և բարեգործական միությունների և ընկերությունների միջոցով իրականացվող աղքատախնամ և բարեգործական աշխատանքների դիտարկման համատեքստում. կարևորվում է ժամանակի սոցիալ-հասարակական շարժման իրավաքաղաքական հիմքը և ապահովվում է կին-սուբյեկտի կենսականությունը. «Այժմ ուրախութեամբ սրտի կը ցանկամ յիշել մեր այժմեան մէկ քանի Ազնվաշուք եւ Ազատամիտ Տիկնանց գովելի օրինակը, որք իրենց քաջարթուն մտօք ընկերութեան կարեւորութիւնը ճանչելով յօժարեցան նոյն գեղեցիկ պաշտօնին առաջնորդ ըլլալ, որոց վսեմ Ազգասիրութեան շարժառիթ համարելով արժանապէս գովեստից նպատակ հանդիսացած են: Նոքա իրենց ջանքերը կամեցան երկու կերպ կարօտելոց նուիրել որք նոցին գթասէր խնամոց եւ քաջութիւն պաշտպանութեան կարօտ էին, մէկն է Հիւանդանոցի խղճալի անձինք եւ միւսը Խասիգիւղի եւ Միջագիւղի դպրոցի աշակերտուհիք, որք բաւական ժամանակ է նոյն Ազնուուհեաց խնամքին տակ պաշտպանելով իրենց կարեւոր շահերը կը վայելեն» **[3, էջ 14–15]**:

Եզրակացություն

19-րդ դարի երկրորդ կեսին օսմանյան կայսրապետության բռնաճնշումների ներքո Կ. Պոլսում աստիճանաբար ձևավորվող գրական սոցիումի առաջադիմության պարագան, դրա զարգացման պատմական և տեսական

հարցերը, ինչպես նաև՝ կանանց դերակատարումը այդ բևեռներում, դեռևս ուսումնասիրված չեն: 19-րդ դարի երկրորդ կեսին, օսմանյան բռնատիրության ժամանակաշրջանում նրա սկզբնավորումը, դրսևորումները և աստիճանական զարգացումները տեղի էին ունենում պայքարի երեք բևեռներում՝

ա. *սոցիալ-հասարակական* և *հումանիտար-մեկենասական* (հաս. կազմակերպությունները, դերն ու նշանակությունը),

բ. *կրթադաստիարակչական* և *գրական-մշակութաբանական* (սոցիումի կրթությունն ու դաստիարակությունը, գրական գործընթացները),

գ. *ազգային-ազատագրական* և *քաղաքական* (հայդուկային շարժումը):

Վերոնշյալ երեք դեպքերում էլ 19-րդ դարի երկրորդ կեսին, կին-տղամարդ իրավահավասարության ձեռքբերման և ազատագրության համատեքստում, ուշագրավ է և կարևորվում է հայ մտավորական կանանց դերակատարությունը:

Երախտագիտություն. Աշխատանքն իրականացվել է ՀՀ Բարձրագույն Կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ՝ 23PTS-6B005 գիտական նախագծի շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ազգային Սահմանադրութիւն Հայոց (Նիզամնամէի Միլլէթի Էրմէնիան), Կ. Պոլիս-Սթանպոլ, Ի տպ. Յ. Միւհէնտիսեան (Ի Հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի Ա. կաթողիկոսի ամենայն հայոց, Ի Տեղապահութեան պատրիարքական աթոռոյ Կոստանդնուպոլսոյ Տ. Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի Նիկոմեդիոյ), 1863, 54 էջ:
2. Կեսարացեան Է., «Ընկերութեան օգտակարութիւնը», «Կիթառ». Հանդէս ամսօրեայ, 1862, թիւ 1, էջ 4-7:
3. Կեսարացեան Է., «Ընկերութեան օգտակարութիւնը»: «Կիթառ». Հանդէս Ամսօրեայ, 1862, թիւ 2, էջ 14-16:
4. Պողոսեան Ե., Մխիթ. Ուխտէն: Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հտ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1957, 784 էջ:
5. Պողոսեան Ե., Մխիթ. Ուխտէն, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հտ. Բ, Վիեննա, Մխիթարեան տպ., 1963, 464 էջ:
6. Պողոսեան Ե., Մխիթ. Ուխտէն: Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հտ. Գ, Վիեննա, Մխիթարեան տպ., 1969, 204 էջ:
7. Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), ՀԽՍՀ ԳԱ. Պատմ. ին-տ, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ. 1989 380 էջ:
8. «Մասիս», Կ. Պոլիս, 1864, թիւ 636, էջ 2: